



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

КОСВЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ ВРЕМЕНИ В АНГЛИЙСКИХ И АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

Лусине Гегамовна Мадатян

 ORCID: [0000-0001-8824-527X](https://orcid.org/0000-0001-8824-527X)
madatyanlusine@yandex.ru

*К.ф.н., младший научный сотрудник,
Институт археологии и этнографии НАН РА,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

Настоящая работа посвящена сопоставительному анализу косвенных проявлений времени в английских и армянских народных сказках, концептуализированных как фреймы на основе образов-схем. Исследование проводится с применением основных принципов контекстуального анализа и когнитивной лингвистики. В данной работе косвенные проявления времени в британских и армянских народных сказках классифицируются по следующим фреймам: *пространство как косвенное время, действие как косвенное время и объект как косвенное время*. Параллельно с пространством, объектом и действием эти паттерны также выражают время, возникающее из наиболее распространенного повседневного воплощенного опыта и фоновых знаний. Результаты исследования показывают, что способы репрезентации времени в британских и армянских сказках часто схожи, а иногда и идентичны.

Ключевые слова: образы-схемы, фрейм, косвенное время, картирование, народная сказка, нарратив.

Դեռևս անտիկ աշխարհի փիլիսոփաները ժամանակը դիտարկում էին որպես ամենաառեղծվածային հասկացություններից մեկը: Ուս-

տի պատահական չէ, որ այն ուսումնասիրվել է և դեռ շարունակում է ուսումնասիրվել տարբեր գիտակարգերի շրջանակներում:

Ժամանակի առեղծվածային բնույթը հիմնականում պայմանավորված է ժամանակի վերացական էության: Նաև այս պատճառով է, որ աշխարհի բոլոր լեզուներում, ժամանակային եզրույթներից գատ, հաճախ են լեզվական այլ միավորներ գործածվում ժամանակի մասին խոսելիս: Ժամանակին հաճախ են վերագրվում այնպիսի երևույթների եզրույթներ, որոնք տեսանելի և շոշափելի են, ինչպես, օրինակ, տարածքը:

Այս առումով հատկապես ուշագրավ են ճանաչողական լեզվաբանության շրջանակներում ժամանակի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և մեկնաբանությունները: Համաձայն ճանաչողական լեզվաբանության հետազոտողների՝ ժամանակի հասկացութավորումը ճանաչողական անգիտակցականի մաս է կազմում: Պարզորոշ ընդգծում են նաև այն ընդհանուր տեսակետը, որ ժամանակի ընկալումն ու արտահայտումը բացառապես ժամանակային եզրույթներով խիստ սակավադեպ են, քանի որ ժամանակի մեր ըմբռնման շատ քիչ մասն է բացառապես ժամանակային [16: 127–135]:

Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը պնդում են, որ ճանաչողական համակարգում կուտակված փորձից ելնելով՝ ժամանակին են վերագրվում այնպիսի բնութագրիչներ, որոնք բնորոշ են այլ երևույթներին [15, 16]: Ըստ Էվանսի՝ անհնար է ուսումնասիրել ժամանակի անցումը առանց ֆիզիկական փոփոխության դիտարկման, որն առաջացնում է հենց ժամանակը [9]: Ուստի պատահական չէ, որ շատ հաճախ ժամանակի մասին խոսելիս օգտագործվում են իրադարձություններին, գործողություններին, ինչպես նաև տարածությանն ու առարկաներին առնչվող եզրույթներ:

Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնն իրենց աշխատություններում հստակ ընդգծում են այն տեսակետը, որ ժամանակի հասկացութավորումը տեղի է ունենում հասկացական փոխաբերության և փոխանունության միջոցով [15, 16]: Նրանք առաջարկում են ժամանակի փոխաբերության հետևյալ դասակարգումը՝ ժամանակը փող է (*time is money*), ժամանակը սահմանափակ ռեսուրս է (*time is a resource*), և ժամանակն արժեքավոր իր է (*time is a valuable commodity*), տարածական ժամանակ (*spatial time*), շարժվող ժամանակ (*moving time metaphor*), ժամանակը՝ որպես նյութական բովանդակություն (*the time-substance variation*), ժամանակը՝ շարժվող դիտորդ կամ ժամանակը՝ բնապատկեր (*the moving observer, or time's landscape*) [15: 7–10, 16: 127–153]:

Ճանաչողական տեսաբանները ժամանակին առնչվող փոխանունության հատուկ դասակարգում չեն ներկայացրել, այլ մասնակի անդրադարձ են կատարել փոխաբերությունը քննելիս: Նրանք առաջ են քաշում այն տեսակետը, որ ժամանակահատվածը կարող է արտահայտվել իրադարձությամբ և տարածքով [16: 138–141]:

Մեր հետազոտության շրջանակում առանձնացրել ենք ժամանակն արտապատկերող այնպիսի օրինակներ, որոնք հնարավոր չէ դասակարգել որպես փոխաբերություն կամ փոխանունություն: Փոխաբերության ժամանակ մի տիրույթը ընկալվում է մեկ այլ տիրույթով, իսկ փոխանունության ժամանակ մի տիրույթը փոխարինվում է մյուսով, սակայն մեր սույն ուսումնասիրության մեջ ժամանակը մի փոքր այլ բնույթով ենք ներկայացրել: Այստեղ մենք գործ ունենք երկու տիրույթների հետ զուգահեռաբար: Հետազոտության լեզվանյութում տարածությանն, առարկային, գործողությանը վերաբերող եզրույթները արտահայտում են այն, ինչի համար նախատեսված են, իսկ ժամանակը ենթադրվում է հենքային գիտելիքների կիրարկմամբ: Այսինքն, ի տարբերություն փոխաբերության և փոխանունության, ոչ թե մեկ

տիրույթ է ընկալվում, այլ երկու՝ համաժամանակյա՝ ելնելով ճանաչողական հենքային գիտելիքներից: Արդյունքում՝ ժամանակի հասկացութավորումը տարածության, առարկայի, գործողության միջոցով դիտարկում ենք որպես ժամանակի անուղղակի արտահայտման կադապարներ:

Ֆրեյմային իմաստաբանության (frame semantics) համաձայն՝ կադապարները կառույցներ են, որոնք օգնում են ընթեցողին տեքստը հասկանալ ոչ թե բառի ուղղակի՝ բառարանային իմաստով, այլ հենքային գիտելիքներով և կուտակված կենսափորձով [10]:

Հիշյալ կադապարները խարսխված են տարբեր պատկեր-սխեմաների վրա: Դրանք ճանաչողական մակարդակում համարվում են զգայական ընկալումների և մարդկային ճանաչողության փորձի դրսևորման միջոցներ, որոնք ձևավորվում են ժամանակի ընթացքում մարդուն շրջապատող աշխարհի հետ ունեցած ամենօրյա փոխներգործության, ինչպես նաև լեզվական ու պատմական փորձի արդյունքում [15]: Պատկեր-սխեմաները կարող են հիմնային դերակատարում ունենալ ժամանակի կադապարային կառույցների հետազոտության մեջ:

Ժամանակի անուղղակի արտահայտումը լավագույնս արտահայտված է ժողովրդական հեքիաթի ժանրում, քանի որ հեքիաթային պատումի մեջ ժամանակի կոնկրետ ընդգծում, առավել ևս՝ թվային միավորներով արտահայտում գրեթե չի դիտարկվում: Ուստի հեքիաթում ժամանակի անուղղակի դրսևորումներն այլ եզրույթներով են հաճախադեպ: Չնայած կան դրվագներ, որտեղ ժամանակային եզրույթները առանց որոշարկման գործածում են գտնում, ինչպես, օրինակ, *մի օր, երկու օր, երեք օր* կառույցները: Այնուամենայնիվ, ժամանակային այս եզրույթների գործածումը, թեկուզ և անորոշ, մեծ տարածում չունի հեքիաթներում:

Հեքիաթը՝ որպէս երևակայության և իրականության միաձուլման արտահայտություն, չի պարտադրում ժամանակի հստակ հիշատակություն, փոխարենը՝ հեքիաթներում հաճախ հնարավոր է հանդիպել ժամանակի արտապատկերման, որտեղ «Ժամանակ» բառը իսպառ բացակայում է: Ժամանակի արտապատկերման նման դրսևորումները՝ որպէս ժամանակի արտահայտման անուղղակի միջոցներ, վկայում են այն մասին, որ մարդու կենսափորձը հիմք է ծառայում, որպէսզի հեքիաթի ընթերցողը ժամանակի տևողության մասին ենթադրություններ անի ոչ թե անուղղակիորեն, այլ լեզվական միավորների օգնությամբ:

Հարկ է նշել, որ հեքիաթներում ժամանակի «անհստակությունը», ինչպէս նաև ժամանակի «բացակայությունը» համարվում են ժանրի պահանջ: Ըստ Դ. Հասսի՝ հեքիաթը «անժամանակ» է, որի հիմնական պատճառը ժամանակի նկատմամբ հեքիաթի կառուցվածքային «անհետաքրքրությունն» է [11: 362]: Մ. Լուրիի պնդմամբ՝ ժամանակի անկարևորությունը ժողովրդական հեքիաթի էական բնութագիրն է: Նա առաջ է քաշում այն տեսակետը, որ հեքիաթում ժամանակի հստակ ընդգծման բացակայությունը գալիս է այն փաստից, որ ժամանակը հոգեբանական գործառույթի կրողն է, և հեքիաթի հերոսները, չունենալով ներքին կյանք, լոկ կերպարներ են, որ ապահովում են դիպաշարի զարգացումը, ուստի հեքիաթներում ժամանակի կիրառումն այսպէս թե այնպէս պետք է բացակայի [17: 21]: Ասվածից ենթադրվում է, որ հեքիաթում ժամանակը չի կարևորվում. կենտրոնացումը գործողությունների ծավալումն ու վերջնարդյունքն են:

Հետազոտության նպատակն է համեմատական մեթոդով ուսումնասիրել ժամանակի անուղղակի դրսևորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում որպէս կաղապարային կառույցներ՝ խարսխված պատկեր-սխեմաների վրա:

Ուսումնասիրությունը կատարվել է համատեքստային վերլուծության և ճանաչողական լեզվաբանության հիմնական դրույթների կիրարկմամբ:

Այսպիսով՝ ժամանակի անուղղակի դրսևորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում դասակարգել ենք հետևյալ կադապարներով՝

- տարածքն անուղղակի ժամանակ է,
- գործողությունն անուղղակի ժամանակ է,
- առարկան անուղղակի ժամանակ է:

Առաջին խմբում ընդգրկված են այնպիսի օրինակներ, որտեղ *տարածքը հաճախ անուղղակիորեն ժամանակ է*: Այս օրինակներում հստակ ընդգծվում է ճանաչողական լեզվաբանների այն տեսակետը, որ հնարավոր չէ հայեցակարգավորել ժամանակը՝ խուսափելով տարածական եզրույթներից, քանի որ տարածությունը տեսանելի է, հստակ ու կայուն, մինչդեռ ժամանակը անմիջականորեն հասանելի չէ [4: 689]: *Տարածքն անուղղակի ժամանակ է* կադապարը խարսխված է *տարածություն պատկեր-սխեմայի վրա*:

Այսպես, շատ հաճախ հեքիաթի պատումի ողջ ընթացքում ժամանակը ոչ միշտ է ստանում լեզվական նկարագրություն: Այն քողարկված է տարածության մեջ: Ասվածը պարզաբանելու համար, որպես բնորոշ օրինակ, մեջբերենք մի դրվագ իռլանդական «Ջեյմի Ֆրիլը և երիտասարդ տիկինը» հեքիաթից.

... they went over bold mountains, over little hills, over the deep Lough Swilley over towns and cottages. It seemed to Jamie that they flew all round Ireland before they got to Dublin [5].

Հեքիաթում ժամանակի տևողության ոչ մի ցուցիչ չկա. այն ընկալվում է տարածքների թվարկմամբ, որտեղով անցնում է հեքիաթի հերոսը իր նպատակին հասնելու համար (հասավ Դուբլին): Ելնելով

հենքային գիտելիքներից՝ տարածական թվարկումները արդեն իսկ ենթադրում են այն ժամանակը, որը պահանջվել է այդ տարածությունը հաղթահարելու համար: Հավելենք նաև, որ այս օրինակը վկայում է մեկ այլ փաստի մասին. երբ հերոսի գործողությունները տեղի են ունենում բաց տարածքում, ժամանակի մասին տեղեկությունը զիջում է տարածականին [18]:

Տարածությունը բնութագրող տեղանուններից բացի՝ ժամանակային փոխաբերականացված կաղապարները դրսևորվում են նաև տարածական մակբայներով.

*Her man was mournful, tearful, wandering **down and up** about the banks of the loch [6].*

Բրիտանական «Ծովի կույսը» հեքիաթից քաղված վերոնշյալ օրինակում ժամանակի ոչ մի փաստացի ակնարկ չկա: Մակայն ժամանակի երկար տևողության մասին ենթադրություն է արվում *down and up* մակբայի միջոցով: Այն ժամանակակից անգլերենում ունի հետևյալ հերթականությունը՝ *up and down*, և նշանակում է վեր ու վար անել: Մակայն մեր ուսումնասիրած բրիտանական գրեթե բոլոր հեքիաթներում այս մակբայը շրջված է օգտագործվում՝ *down and up*: Մակբայի այս շրջուն շարադասությունը, ըստ երևույթին, գերազանցապես կապված է տեղանքի հետ: Սովորաբար լճերը գտնվում են աշխարհագրորեն ավելի ցածրադիր տեղանքներում, ուստի հերոսն ավելի բարձր վայրից է իջնում դեպի լիճ:

Ուշագրավ են նաև անգլիական «Չայլդ Ռոուլենդ» հեքիաթից բերված կաղապարների օրինակները.

*Then he went **on, and on, and on, and on**, till he came to the round green hill with the terrace-rings from top to bottom, ... [12: 92].*

*He went **along**, and **along**, and **along**, and still further along till he came to the horse-herd of the King of Elfland feeding his horses [12: 92].*

Նշված օրինակներում տարածական նախդիրների (on, along) բազմակի կրկնությունները կարելի է դիտարկել որպես ժամանակի փոխաբերականացված արտահայտություններ: Շարժում արտահայտող բային հաջորդող նախդիրները երկարատևության պատկեր են ստեղծում, ինչը պատումին հաղորդում է նաև ռիթմիկ հնչողություն: Հավելենք, որ մեր ուսումնասիրած հայկական հեքիաթներում նման օրինակները բացակայում են:

Գործողությունն անուղղակի ժամանակ է կաղապարի ճանաչողական արտապատկերման հիմքը շարժում պատկեր-սխեման է երկու այլ օժանդակ սխեմաներով՝ գործողություն, վարքագիծ:

Ստորև ներկայացնենք ասվածը լուսաբանող օրինակներ Ջ. Ջեյքոբսի հավաքագրած հեքիաթներից.

*They **travelled** and **travelled** and could see never a house. It began to be dark, and they were hungry [12: 96].*

*They **fought**, and they **fought**, and they **fought**, till Childe Rowland beat the King of Elflandon to his knees... [12: 94].*

Առաջին օրինակում *travel* (ճանապարհորդել) բայի կրկնակի կիրառությամբ շեշտվում է ոչ միայն երկար ճանապարհը, այլև ժամանակահատվածը: Երկրորդ օրինակում *fought* (կռվել) բայի եռակի կիրառությունից պարզ է դառնում, որ երկար պայքարից հետո է միայն Չայլդ Ռոուլենդը կարողանում ծնկի բերել թագավոր Էլֆլանդոնին:

Նման օրինակները բազմաթիվ են նաև հայկական ժողովրդական հեքիաթներում: Ստորև բերված են համապատասխան օրինակներ Ա. Մխիթարյանցի հավաքագրած հեքիաթներից.

*Հելա գնացի, գնացինք, գնացինք, սարիւմ տակ մէ մենձ
մաղարի մ գուռ կայնանք [1: 124]:*

*Էթում ա, Էթում ա, Էթում ա, հասնում ա իրանց երկիր [1:
239]:*

Հայերեն օրինակներում շարժում ցույց տվող *գնալ* և բարբառային *էթալ* բայերի կրկնությունը նույնպես հայեցակարգվում է որպես երկար ժամանակահատված:

Գործողությունն անուղղակի ժամանակ է կադապարի ճանաչողական արտապատկերման հիմքը շարժում պատկեր-սխեման է՝ վարքագիծ օժանդակ սխեմայով:

Քննենք «Մաշված վերարկուն» բրիտանական ժողովրդական հեքիաթից ստորև ներկայացված դրվագը, որտեղ ժամանակը հայեցակարգվում է արտասվելու և արդյունքում գոյացած գետի պատկերման միջոցով:

*So he turned his back, and sat by his window looking out
over the sea, and weeping great tears for his lost daughter,
till his white hair and beard grew down over his shoulders
and twined round his chair and crept into the chinks of the
floor, and his tears, dropping on to the window-ledge, wore
a channel through the stone, and ran away in a little river to
the great sea [13].*

Պալատում միայնակ ապրող հարուստ ծեր մարդն այնքան է արտասվում, որ գետ է գոյանում և հոսում, միանում է ծովին: Ժամանակ չի նշվում, սակայն արցունքներից գետի գոյացումը ենթադրում է բավականին երկար ընթացք: Ժամանակի երկարաշունչ տևողությունն ակներև է նաև մազերի սպիտակելը և հատակին հասնող մորուքը նկարագրելիս: Հիմնվելով ճանաչողության մեջ արդեն կուտակած փորձի վրա՝ ընթերցողը գիտի, որ մորուքի երկարելու ու հատակին

հասնելու համար բավականին ժամանակ է հարկավոր: Նմանօրինակ սյուժետային զարգացումներ առկա են նաև գրական հեքիաթներում: Օրինակ՝ «Ալիսան հրաշքների աշխարհում» ստեղծագործության մեջ համանուն հերոսուհին այնքան է լաց լինում, որ արցունքներից ավազան է գոյանում.

*«You ought to be ashamed of yourself», said Alice, «a great girl like you», (she might well say this,) «to go on crying in this way! Stop this moment, I tell you!» But she went on all the same, **shedding gallons of tears, until there was a large pool all round her, about four inches deep and reaching half down the hall** [8: 17].*

Կաղապարային նման գործածությունը բացառություն չէ հայկական ժողովրդական հեքիաթաշարում ևս: «Չար պառավը» հայկական հեքիաթում աղջիկն այնքան է լաց լինում, որ արցունքներից գետ է գոյանում: Այն հոսում, հասնում է հովվին, ով համտեսում է այն ու տեսնելով, որ ջուրն աղի է, գետի երկայնքով գնում, գտնում է աղջկան.

*Ախչիգյը ընգիս ա ծակնեն, լաց ինելվ շոռ կյաս, վեր հացը ճարի: Շատ վեր լաց ա ընիս, **ըրտսունքները մին կյետ ա տոնայս ըսկսիս քյնայը** [2: 615]:*

Արտասվելը և արտասուքից գոյացած գետը ձևավորում են երկար ժամանակահատվածի պատկեր: Հավելենք նաև, որ այս խմբում վերլուծված օրինակների մեջ արցունքից գետի գոյացումը չափազանցության ոճահնարի դրսևորում է, որն ավելի տպավորիչ և ազդեցիկ է դարձնում դրվագը:

Առարկան անուղղակի ժամանակ է կաղապարային խմբում առանձնացրել ենք հեքիաթներում հանդիպող այնպիսի դրվագներ, որտեղ առարկան վերածվում է ժամանակը քողարկող ճանաչողական կաղապարի: Ստորև մեջբերենք մի դրվագ Ջ. Քեմփբելի հավաքագրած

հեքիաթափնջի «Բէյլ Լաննեն» պատումից, որտեղ մաշված հագուստը փոխաբերականացված կաղապար է ժամանակի երկար ընթացքը անուղղակիորեն բնութագրելու համար.

*So, the lad took the hundred pounds, and he went to France, and then he went to Spain, and all over the world, but he could not find the lady he had seen in his sleep. At last he came to London, and he had spent all his money, and **his clothes were worn**, and he did not know what he should do for a night's lodging [7].*

Հեքիաթի գլխավոր հերոսը ճանապարհ է ընկնում՝ փնտրելու այն կնոջը, ում տեսել էր երագում: Նա թափառում է աշխարհով մեկ և ծախսում իր ամբողջ գումարը: Երբ հասնում է Լոնդոն, նրա շորերը մաշված են լինում: Այստեղ ժամանակի ուղղակի նկարագրություն չկա: Ժամանակի տևողությունը ընկալվում է մի կողմից տեղանունների թվարկմամբ, մյուս կողմից՝ մաշված հագուստի նկարագրությամբ (*his clothes were worn*), որն ավելի է շեշտում ժամանակի երկար ընթացքը և պատկերավոր դարձնում հերոսի տառապանքները: Նմանօրինակ դրվագների հանդիպում ենք նաև հայկական ժողովրդական հեքիաթներում: Ահա մի հատված «Հաբրմանի» հեքիաթից, որտեղ մաշված կոշիկը ծառայում է որպես ժամանակի անուղղակի արտապատկերման կաղապար.

Կայնավ տեսավ, որ Համբրմանու ըսածի պես, իրան հագած էրկաթե չարուխները մաշել են, պողպատե գավազանեն էլ ձեռի մեջ թիզիմ է մացել [1: 21]

Հեքիաթում գլխավոր հերոսուհին՝ թագավորի դուստրը, ամուսնանում է Հաբրմանի անունով օձի հետ, որը գիշերը կերպարանափոխվում է տղամարդու. կինը երկար ժամանակ չի մատնում ամուսնուն: Մի օր թագավորի դուստրը բացում է այդ գաղտնիքն իր քույրերին

և մորը: Երբ Հաբրմանին իմանում է, փախչում է և հայտարարում, որ կինն իրեն կգտնի երկաթե կոշիկները մաշելուց և ձեռնափայտը կարճացնելուց հետո: Միայն իր երկաթե կոշիկների մաշվելուց և փայտը կարճացնելուց հետո է նա հասկանում, որ եկել է Հաբրմանի հնարավոր բնակավայրը: Ինչպես անգլերեն օրինակում մաշված հագուստը, այստեղ էլ մաշված երկաթե կոշիկները և ձեռնափայտը հերոսուհու անցած երկար տարածության և երկար ժամանակի անուղղակի արտապատկերման ձևերն են:

Այսպիսով՝ տարբեր ժողովուրդներին պատկանող այս հեքիաթներում ժամանակի փոխաբերական կադապարներով հայեցակարգավորման ձևերը համարժեք են միմյանց, երբեմն էլ՝ նույնական: Անկախ ժողովուրդների պատմական զարգացումից՝ ժամանակը շարունակում է արտապատկերվել անհատի մտածական համակարգում ունեցած առարկաների, նրանց շարժման, ժամանակը տնօրինելու, գործողությունների, տարածության մասին ունեցած մտապատկերների միջով:

ЛИТЕРАТУРА

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 4: – Երևան՝ ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1963: – 521 էջ:
2. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հ. 5: – Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966: – 760 էջ:
3. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: – Երևան, 2002:
4. Арутюнова Н.Д. Теория метафоры. – М.: Прогресс, 1990. – 498 с.
5. Ashliman D. Jamie Freel and the Young Lady. Abducted by aliens, 1999–2023 [Electronic resource]. – Mode of access: <https://sites.pitt.edu/~dash/abduct.html-#maclintock> (Date of access: Jan 20, 2023).
6. Campbell J. The Sea Maiden. Popular tales of the West Highlands, Vol. I, 1890 [Electronic resource]. – Mode of access: <https://sacred-texts.com/neu/celt/p-t1/pt108.htm> (Date of access: Jan 10, 2023).

7. *Campbell J.* Bailie Lunnain. Popular tales of the West Highlands, Vol. I, 1890 [Electronic resource]. – Mode of access: <https://sacred-texts.com/neu/celt/pt1/pt123.htm> (Date of access: Mar 20, 2023).
8. *Carroll L.* Alice's Adventures in Wonderland. Volume One, Publishing Chicago, Illinois, 1998. – 195 p.
9. *Evans V.* The Structure of Time. Language, Meaning and Temporal Cognition. Amsterdam / Philadelphia: John Benjamins Publishing Company, 2004. – 287 p.
10. Fillmore Ch. Frames and the Semantics of Understanding // *Quaderni di Semantica*, Vol. 6, No 2, 1985. – PP. 222–254.
11. *Haase D.* Children, War, and the Imaginative Space of Fairy Tales // *The Lion and The Unicorn*, Vol. 24, 2000. – PP. 360–377 [Electronic resource]. – Mode of access: <http://dx.doi.org/10.17613/M60D6J> (Date of access: Mar 10, 2023).
12. *Jacobs J.* English Fairy Tales, eBook, 1890. – 201 p.
13. *Jacobs J.* Tattercoats. More English Fairy Tales. – London: Everyman's Library Children's Classics, 2004. – PP. 281–285.
14. *Johnson M.* The Body in the Mind: The Bodily Basis of Meaning, Imagination and Reason. – Chicago: Chicago University Press, 1987. – 233 p.
15. *Lakoff G., Johnson M.* Metaphors We Live by. Chicago: The University of Chicago, 1980. – 242 p.
16. *Lakoff G., Johnson M.* Philosophy in the Flesh; The Embodied Mind and its Challenge to Western Thought. – New York: Basic Books, 1999. – 590 p.
17. *Lüthi M.* The European Folktale: Form and Nature: Folklore Studies in Translation. – Bloomington: Indiana University Press, 1986. – 200 p.
18. *Mkhitaryan Y., Madatyan L.* Space and Time Transference of Main Characters in British and Armenian Fairy Tales // *Armenian Folia Anglistika*, Vol. 18, No. 1(25), 2022. – PP. 53–72. – DOI: [10.46991/AFA/2022.18.1.053](https://doi.org/10.46991/AFA/2022.18.1.053).

**ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Լ.Գ. Մադաթյան

ORCID: [0000-0001-8824-527X](https://orcid.org/0000-0001-8824-527X)
madatyanlusine@yandex.ru

*Բ.գ.թ., կրտսեր գիտաշխատող,
ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է համեմատական մեթոդով ուսումնասիրել ժամանակի անուղղակի դրսևորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում՝ որպես կադապարային կառույցներ՝ խարսխված պատկեր-սխեմաների վրա: Ուսումնասիրությունը կատարվել է համատեքստային վերլուծության և ճանաչողական լեզվաբանության հիմնական դրույթների կիրարկմամբ: Այս հոդվածի շրջանակներում ժամանակի անուղղակի դրսևորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում դիտարկվել են հետևյալ կադապարներով՝ տարածքն անուղղակի ժամանակ է, գործողությունն անուղղակի ժամանակ է, առարկան անուղղակի ժամանակ է: Նշյալ կադապարները տարածքին, առարկային և գործողությանը զուգահեռաբար արտահայտում են նաև ժամանակ: Վերջինս հասկացութավորվում է՝ ելնելով կուտակած կենսափորձից և հենքային գիտելիքներից: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ թե՛ բրիտանական, թե՛ հայկական հեքիաթներում ժամանակի արտապատկերման ձևերը համարժեք են միմյանց, երբեմն էլ՝ նույնական:

Բանալի բառեր՝ պատկեր-սխեմաներ, կադապար, անուղղակի ժամանակ, արտապատկերում, ժողովրդական հեքիաթ, պատում:

INDIRECT MANIFESTATIONS OF TIME IN BRITISH AND ARMENIAN FOLK TALES



L. Madatyan

ORCID: [0000-0001-8824-527X](https://orcid.org/0000-0001-8824-527X)

madatyanlusine@yandex.ru

*PhD in Philology, Junior Researcher,
Institute of Archeology and Ethnography NAS RA,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

The present paper is devoted to the comparative analysis of the indirect manifestations of time in British and Armenian folk tales, conceptualized as frames based on image-schemas. The study is conducted by applying the main principles of contextual analysis and cognitive linguistics. In the present paper, the indirect manifestations of time in British and Armenian folk tales are classified into the following frames: *space as indirect time*, *action as indirect time*, and *object as indirect time*. In parallel with space, object, and action, these patterns also express time which arises from the most common everyday embodied experience and background knowledge. The study results reveal that the ways of representing time in British and Armenian fairy tales are often similar and sometimes identical.

Keywords: image-schemas, frame, indirect time, mapping, folk tale, narrative.

Информация о статье:

статья поступила в редакцию 18 июля 2024 г.,

подписана к печати в номер 14 (18) / 2024 – 25.12.2024 г.